

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«_____» _____ 2017 թվականի N___- Ա

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածին, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ և 29-րդ հոդվածներին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ

1) աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին պետական տուրքի մասով փոխանցված և չօգտագործված 23.360.000 ՀՀ դրամ գումարն ուղղվում է ծրագրի շրջանակներում տեղեկատվության տրամադրման ծառայության և գույքային իրավունքների պետական գրանցման համար գանձվող վճարների կատարմանը.

2) ծրագրի շահառուների հետ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N812-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն կնքվող նվիրատվության պայմանագրերի՝

ա. նոտարական վավերացման վճարները կատարվում են ծրագրի շահառուների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N733-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն,

բ. նոտարական վավերացման համար պետական տուրք չի գանձվում,

3) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված նվիրատվության պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման ծառայության համար՝

ա գանձվող 9030 հազ. դրամ վճարները կատարվում են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցների հաշվին,

բ. պետական տուրք չի գանձվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Անհրաժեշտությունը
	«Գույքային իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N812-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N812-Ա որոշմամբ կարգավորվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում կառուցված 258 բնակելի տները՝ ծրագրի շահառուներին հանձնելու հետ կապված հարցերը:</p> <p>Որպես խնդրի կարգավորման առաջին քայլ, ՀՀ Լոռու մարզպետը՝ ծրագրի շրջանակներում կառուցապատումն իրականացրած «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության սնանկության գործով կառավարչի հետ, կնքել է նշված 258 գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիրը:</p> <p>Խնդրի կարգավորման երկրորդ քայլը՝ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից ծրագրի շահառուների հետ նշված բնակելի տների նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացի ապահովումն է:</p> <p>Այդ կապակցությամբ, անհրաժեշտություն կա հստակեցնել այդ նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման, դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները:</p>
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Ծրագրի շրջանակներում ծագած խնդիրների կանոնակարգում և ծրագրի շահառուների նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների լիարժեք ավարտում:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը.
	Որոշման նախագծի կարգավորման նպատակը՝ Ծրագրի շահառուների համար կառուցված բնակելի տների նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման, դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման գործընթացի ապահովումն է՝ համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրների հստակեցման միջոցով:

5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագիծը մշակվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից:
6.	Ակնկալվող արդյունքը
	ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների 258 ընտանիքների համար կառուցված բնակելի տների նկատմամբ նրանց իրավունքների պետական գրանցում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
 ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
 ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ
 ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքային իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	«Գույքային իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:
2.	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
	«Գույքային իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեղադրված է ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքի՝ http://lori.mtad.am/ , «Հայտարարության » բաժնի «Այլ հայտարարություններ» ենթաբաժնում: